

I. Խ.Ա.Հ.Մ. ԱՇԽԺՈՂ ԿՈՄԱՏԸ
Հ.Ա.Մ.Կ.Խ.ԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԸճԿ. Շվեդիկի զեկուցման առթիվ)

II. ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ
ԱՐՉՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԻՔ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(ԸճԿ. Շվեդիկի զեկուցման առթիվ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ.Ա.Մ.Խ.Ի

ՅԵԿԵԿԱՆ

1 9 3 4

ԽՍՀՄ ԱՇԽԺՈՂԿՈՄՍՏԸ Հ.Ա.Մ.Կ.Խ.-ԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԸՆկ. Շվեդիայի գեկուցման առթիվ)

I

Յ-րդ պլենումը համաձայնությամբ և տալիս ԽՍՀՄ կենտրոնի կողմից, Ժողովուրդի և Հ.Ա.Մ.Կ.Խ. ի նախագահության վորջմանը Խ.Ս.Հ.Մ. Աշխտողկոմատը ՀԱՄԿՍ-ին միացնելու և Աշխտողկոմատի ու նրա տեղական մարմինների ֆունկցիաներն արձմիություններին հանձնելու մասին, վորպես վողջ բանվոր դասակարգի համար խոշորագույն նշանակություն ունեցող մի միջոցառում: Ձգտելով բարձացնել բանվորների բարեկեցությունը, մեր կուսակցությունն ու կառավարությունը սոցիալական ապահովագրություն և աշխատանքի պաշտպանություն գործն ամբողջապես և անմիջականորեն հանձնում են արձմիություններին, մեր յերկրի այդ ամենամասսայական բանվորական կազմակերպություններին:

Այս վորոշումն անխուսափելիորեն բխում է սոցիալիստական շինարարության վողջ ընթացքից:

Սոցիալիստական տնտեսություն, բանվոր դասակարգի և արհեստակցական միությունների աճումն արմատական փոփոխություններ մտցրեց Աշխտողկոմատի մարմինների աշխատանքի մեջ:

Գործազրկության վերացումը և բանուժի կազմակերպված հավաքագրման գործի հանձնումը տնտեսական մարմիններին հանգեցին այն բանին, վոր վերացան Աշխտողկոմատի նախկին ֆունկցիաներն աշխատանքի շուկայի կարգավորման և բանուժի բախման ընագավառում: Աշխատավարձի կարգավորումը, վորը չի կարող ամենասիրտ կերպով չկապվել աշխատանքի արտադրողականության հետ, կատարում են տնտեսական մարմինները և արձմիությունները հավաքական պայմանագրերի հիման վրա:

Սոցիալական ապահովագրության հսկայական չափով աճած գործը, ինչպես զուց և տալիս անցած տարիների փորձը, դուրս է չեկել Աշխտողկոմատի և Սոցպակետի տրոնրդի մարմինների շրջանակները:



11-269599

Կրթության և Մաթիլան

Սոցիալական ապահովագրութունը դեռ լրիվ չըջագարձ չի կատարել դեպի արտադրութուն, դեպի բանվորական կոն բետ կարիքները: Վոչ թե արտադրական, այլ տերրիտորիալ ոկզբունքով կառուցված Աշխտոդկոմատի և Սոցապկետխորհրդի աշխատանքի պրակտիկայում չի առանձնացված արտադրության առաջատար ճյուղերի, ձեռնարկութունների բանվորության և առաջատար պրոֆեսիաների սպասարկումը: Իրա հետ միասին ապահովագրվածների նկատմամբ հավասարաբար մոտեցում ունենալու հետեվանքով՝ սիմուլյանտը, չվողը և գործալիքը սոցիալական ապահովագրությամբ ապահովվում են առաջավոր հարվածային բանվորին ու հին կադրային բանվորին հավասար:

Սա ավելի քան անթույլատրելի չե այժմ, յերբ սոցիալական ապահովագրության ֆոնդերն անընդհատ աճելով հասել են վիթխարի գումարի—4 և կես միլիարդ ուրբլու և չերբ սոցիալական ապահովագրությունը մեր յերկրի բանվորի ընդհանուր նյութական բուշելում բռնել և ամենակարեւոր տեղերից մեկը:

Արհմիութունների մանրացումը, վորը կատարվեց ընկ. Ստալինի նախաձեռնությամբ և Համ. Կ. (բ) Կ.Կ.Կ.-ի վորոշմամբ, ուժեղացրեց արհեստակցական միությունների մասնակցությունը սոցիալիստական շինարարության մեջ և բարելավեց նրանց աշխատանքը բանվորական մասսաների նյութական, կուլտուրական և կենցաղային կարիքների սպասարկման բնագավառում: Արհմիություններն արտիճանաբար ավելի ու ավելի ընդարձակեցին իրենց գործունեությունը սոցիալական ապահովագրության բնագավառում, այդպիսով կլանելով Աշխտոդկոմատի Սոցապկետխորհրդի ֆունկցիաները:

Համ. Կ. (բ) Կ.Կ.Կ.-ի և Հ.Ս.Մ.Կ.Խ.-ի Ծ-րդ պլենումի վորոշմամբ կազմակարգված 11 ճյուղային սոցապերամարկդներին իրենց արդարացրել են լիովին, բարելավելով արտադրության առաջատար ճյուղերում աշխատող բանվորության կարիքների սպասարկումը:

Արհեստակցական միությունները, Ծ-րդ համագումարի վորոշումների հիման վրա, ել ավելի ուժեղացրին իրենց մասնակցությունը բանվորական և աշխատավորական մասսաների սոցիալական ապահովագրման գործում:

Արհմիությունների բանվորական լայն մասսաներին ներգրավեցին սոցիալական ապահովագրության իրականացմանը

վերահսկելու գործում և ստեղծեցին ապահովագրկան աշխատողների բավականին խոշոր պրոֆմիութենական կետիվ:

ԽՍՀՄ Աշխտոդկոմատը Հ.Ս.Մ.Կ.Խ.-ի հետ միացնելու վորոշումով ավարտվում է սոցիալական ապահովագրության վերակառուցումը, վորն սկսվեց Հ.Ս.Մ.Կ.Խ.-ի Ծ-րդ պլենումում: Սոցիալական ապահովագրության ամբողջ ցանցի աշխատանքները վերից վար արմատապես բարելավելու, նրա աշխատանքը վերակառուցելու, նրան գործարաններին և խոշոր խորհանտեսություններին մոտեցնելու, սոցիալական ապահովագրության ցանցում աշխատող կադրերը լավացնելու և Սոցապի մարմինների աշխատանքի պրակտիկայում բյուրոկրատիզմը վճռականորեն արմատախիլ անելու ուղղությամբ: Աշխտոդկոմատն ու Սոցապի մարմիններն այժմ ամբողջապես և լիովին կլանված են Արհմիությունների մեջ, վորոնք համաձայն այդ վորոշման սոցիալական ապահովագրության գործի վերահսկելու դերից անցնում են նրանամիջական ղեկավարման դերին:

Անցյալ տարիների փորձը լիովին ապացուցեց, վոր կուսակցության և նրա Կենտրոնական Կոմիտեյի ղեկավարությամբ ջանքերով աշխրին և անշեղորեն կիրառելով կուսակցության գիծը՝ արհմիութունները կարողացան ավելի սերտորեն կապվել մասսաների հետ և ապահովել բանվորների նյութական ու կուլտուր-կենցաղային շահերի լավագույն սպասարկումը, վորի հետեվանքով արհմիություններն ի վիճակի յեղան այժմ ամբողջապես իրենց վրա վեցնել մեր յերկրի բանվորության և աշխատավորական մասսաների սոցիալական ապահովագրության խոշորագույն գործը:

II

Աշխտոդկոմատը ՀՍՄԿԽ-ին միացնելու և Աշխտոդկոմատի ու Սոցապի մարմինների ֆունկցիաներն արհմիություններին փոխանցելու կապակցությամբ վերջիններին տրամադրության տակ են անցնում նյութական վիթխարի միջոցներ: Սոցապի բյուջեի 1933 թ. աճել է մինչև 4 և կես միլիարդ ուրբլի, վորից ժամանակավոր անաշխատունակության նպաստներն ու ապահովման լրացուցիչ միջոցները կազմում են 800 միլիոն ուրբլուց ավելի, կենսաթոշակները՝ ավելի քան 530 միլ. ուրբլի, սանատորա-կուրորտային բուժում, հանգստյան տներ և այլն՝ ավելի քան 200 միլ. ուրբլի, բանվորական բնակարային շինարարության 690

միլ. ուսբլի, կաղրերի պատրաստումը և թոշակներ 600 միլ. ուսբլ. մանկական հաստատությունների շինարարություն և պահպանում — 190 միլ. ուսբլ., դիվետիկ սնունդ — 35 միլիոն ուսբլ. և այլն.:

Արհմիությունները պետք է արմատախիլ անեն ամեն տեսակ բյուրոկրատիզմը ու հավասարեցումը սոցիալական ապահովագրության մեջ: Նրանք պետք է սոցիալական ապահովագրությունը դարձնեն բանվորների նյութական գրություն բարելավելու, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, աշխատանքային կարգապահությունն ամրացնելու և բանուժի հոսունություն դեմ պայքարելու հզոր լծակ:

Այդ կենսագործելու համար պլենումը հանձնարարում է Հ.Ա.Մ.Կ.Ս.-ի նախագահությունը վերանայել սոցիալական ապահովագրության աշխատանքի վողջ պրակտիկան՝ հարվածալիններին ու հին կաղրային բանվորներին մատակարարման գործում առաջնություն տալու և չվողների, սիմուլյանտների ու գործալիքների դեմ պայքար տանելու ուղղությամբ:

Պլենումն առաջարկում է Հ.Ա.Մ.Կ.Ս.-ի նախագահությունը սոցմրցումն ու հարվածայնությունը քաջալերելու նպատակով վերաձգակի և փոփոխություններ մտցնել սոցիալական ապահովագրության գործող որենսդրության մեջ: Ժամանակավոր անաշխատունակության համար տրվող նպաստների ու կենսաթոշակների չափը հաշվարկելիս, հաշվի առնել վաղ սիսյն ընդհանուր արտադրական ստաժը, այլ և աշխատանքի տեվողությունը սվյալ ձեռնարկությունում: Սոցիալական ապահովագրության գծով կատարվող լուրաքանչյուր տեսակի վճարումների չափը հաշվարկելիս, հարվածայինն ու սոցմրցակիցը պետք է առավելագույն արտոնություններ վայելեն: Սոցիալական ապահովագրության գծով արհմիությունների կատարելիք աշխատանքի կենտրոնում պետք է լինի հոգատար վերաբերմունք դեպի արգիլիսպլանների ու արտադրանքի նորմաների կատարման համար ակտիվ պայքարող բուվորները, պայքար չվողների, գործալիքների, գրփողների դեմ՝ նրանց սոցիալական ապահովագրությունից ռավիլու ամեն մի իրավունքից զրկելու միջոցով:

Պլենումը առաջարկում է Հ.Ա.Մ.Կ.Ս.-ի նախագահությունը՝ անատորիաներ, կուրորտներ և հանգստյան տներ ուղարկել առաջին կերթին հարվածայիններին, ինչպես նաև արհմիության անգամ այն բանվոր-ժառանգողներին, վորոնք ունեն սվյալ հիմնարկում աշխատանքի վաղ պակաս քան 2 տարվա ստաժ: Նմանապես Հ.Ա.Մ.Կ.Ս.-ի նախագահությունը պետք է սահմանի նա-

խապատվություն՝ մանկական մսուրները, հրապարակներն ու պիոներական ճամբարներն — ուղարկելու արհմիության այն անդամների լերեխաներին, վորոնք իրոք հարվածային են հանդիսանում:

Վերանայելով սոցիալական ապահովագրության կարգը, անհրաժեշտ է վճուհան հարված հասցնել հոսունությանը բանվորների մեջ սվյալ ձեռնարկությունում լերկարատեվ աշխատանք կատարելու խթան ստեղծել:

Հ.Ա.Մ.Կ.Ս.-ի պլենումը հաստատապես համոզված է, վոր սոցիալական ապահովագրության կարգի այդպիսի վերանայումը, վորը յերնում է բանվոր դասակարգի և սոցիալիստական արդյունաբերության շահերից, ամբողջապես հավանություն կըստանա մեր լերկերի բանվորական մասսաների կողմից:

Հ.Ա.Մ.Կ.Ս.-ի պլենումը բանվոր-ժառանգողների սոցիալական ապահովագրության անմիջական սպասարկումը (ժամանակավոր անաշխատունակության նպաստներ, կենսաթոշակներ, կուրորտներ, հանգստյան տներ, մսուրներ և այլն) դնում է Միությունների ԿԿ-ների և նրանց տեղական մարմինների (մարզային բաժամունքների ու գործարկում տեղկումների) վրա:

Սրան համապատասխան սոցիալական ապահովագրության ամբողջ գործը վերակառուցել ճյուղային, արտադրական սկզբունքով:

Հ.Ա.Մ.Կ.Ս.-ի ՊԼԵՆՈՒՄԸ ՎՈՐՈՇՈՒՄ Ե՛

1. Սոցիալական ապահովագրության ընդհանուր ղեկավարությունը, Սոցպպի միասնական բյուջեյի հաստատումն ու սոցիալական ապահովագրության որենսդրության մշակումը դնել Հ.Ա.Մ.Կ.Ս.-ի վրա, վերանայելով սոցիալական ապահովագրության Համամիությունական Սորհուրդը:

2. Նկատի ունենալով, վոր արդյունաբերության առաջատար ճյուղերում ճյուղային գանձարկղների ստեղծումն ապահովել և արդյունաբերության սվյալ ճյուղերում աշխատող բանվորների կարիքները լավագույն սպասարկումը, պլենումը վորոշում է բոլոր միությունների ԿԿ-ներում կազմակերպել սոցիալական ապահովագրության գանձարկղներ:

3. Վերացնել Աշխտողկոմատի սիստեմում միջնավ այժմ գոյություն ունեցող տերրիտորիալ գանձարկղները (հանրապետական

յերկրային, մարդային, շրջանային) վորովհետեւ նրանք չեն բաւարարում ապահովազրկածների սպասարկումը կոնկրետ մոտեցում ունենալու պահանջները և չեն ապահովում բանվորների ախտիվ մասնակցութիւնը սոցապահովագրութեան գործում:

4. Յեյնելով հարվածային բանվորների արտադրական մեծ ստաժ ունեցող արհմիութեան անդամների առաջնահերթ ու լավագույն սպասարկումից, և ծավալելով անխնայ պայքար չվճարող, գործաւիժների ու գուփողների դեմ մղվելիք անխնայ պայքարից, գործարկումները գործող որենսդրութեան հիման վրա վորոշում են անաշխատունակութեան համար նստատ ստանալու իրավունքըն ու չափը, բանվորներին ուղարկում են հանգստյան տներն, սանատորիաներն ու կուրորտները, պահպանում և վարձում են տեղեր մսուրներում ու մանկապարտեզներում, տալիս են դիտարկ սննդի թուշ րտիւթիւն, վորոշում են հղիութեան, ծննդաբերութեան, յերեխային կերակրելու համար յրացուցիչ ապահովում ստանալու իրավունքը:

5. Սոցիալի տեղական նշանակութիւն ունեցող բոլոր սանատորիաներն ու հանգստյան տներն իրենց ոժանդակ տնտեսութիւնների հետ միասին անցնում են յերկրային ու մարդային Արհմիութեան արամադրութեան տակ:

6. Սոցալի այն կուրորտները, սանատորիաներն ու հանգստի տները, վորոնք ունեն համամիութենական նշանակութիւն, հանձնվում են Հ.Ա.Մ.Կ.Խ.-ին:

Աշխատանքի պաշտպանութեան բնազավառում պլենումը հանձնարարում է Հ.Ա.Մ.Կ.Խ.-ի նախագահութեանը մշակել և կերտել ձեռնարկութիւններում աշխատանքի պաշտպանութեան և անվտանգութեան տեխնիկայի գործի բարելավումն ապահովող մի շարք կոնկրետ ձեռնարկումներ:

Աշխատանքի պաշտպանութեան ու անվտանգութեան տեխնիկայի գործը լավ հիմքերի վրա գնելու և այդ գործն ալելի կոնկրետ ղեկավարման նպատակով պլենումը հանձնարարում է նախագահութեանը մշակել աշխատանքի պաշտպանութեան, անվտանգութեան, տեխնիկայի ու արդյունաբերական սանիտարիայի տեսչութեան աշխատանքին վերաբերող հարցը:

III

Արհմիութեանների վրա դրած խնդիրները կարող են կենսագործել միայն այն պայմանով, յիթե վճռական պայքար մղվի

այն բյուրոկրատական վերաբերմունքի դեմ, վորպեսին ցուցաբերում են աւանձին պրոֆկազմակերպութիւնները սոցիալական ապահովագրութեան և բանվորների աշխատանքի պաշտպանութեան գործի հանդեպ — բանվորական ամենալայն մասսաները ալելի մեծ չափով ներգրավեն պրոֆկազմակերպութիւնների ամենորայ աշխատանքի մեջ, ալելի սերտ կապ ստեղծվի մասսաների հետ և ամենազոն, ուղղիք վերաբերմունքը ցուցց տրվի բանվորների կարիքներին ու դիմումներին:

Պլենումը պարտավորեցնում է բոլոր արհմիութեանները — թիւններին պլենումի սույն վորոշումների բովանդակութիւնն ու նշանակութիւնը լայն կերպով պարզաբանել — բանվորական մասսաներին:

Պլենումը հանձնարարում է Հ.Ա.Մ.Կ.Խ.-ի նախագահութեանը մեկ ամսվա ընթացքում մշակել համապատասխան ձեռնարկումներ, վորոնք բղխեն Աշխտողկոմատը Հ.Ա.Մ.Կ.Խ.-ի հետ միացնելու և նրա ֆունկցիաների արհմիութեաններին հանձնելու վորոշումից:

Հ.Ա.Մ.Կ.Խ.-ի պլենումը համոզված է, վոր կուսակցութեան և կառավարութեան վորոշումը Աշխտողկոմատը Հ.Ա.Մ.Կ.Խ.-ի հետ միացնելու և սոցիալական ապահովագրութիւնը, աշխատանքի պաշտպանութիւնն ու անվտանգութեան տեխնիկան ամբողջապես արհմիութեանների հանձնելու մասին՝ բանվորական լայն մասսաների մեջ խանդավառութեան նոր ալիք կառաջացնի, կուժեզացնի սոցիալական մրցումն ու հարվածայնութիւնը և ել ալելի կերպով արհմիութեանների դերն ու նշանակութիւնը, վորպես սոցիալիստական շինարարութեան շահերը պաշտպանող և բանվորների առորյա կարիքները հոգացող բանվորական ինքնուրույն կազմակերպութիւններն:

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒՅՅԱՆ
ԳԾՈՎ ԱՐՀԱՒՈՒՅՑՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔ-
ՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Ընկ. Շվեդիի գեկուցման առթիվ)

ՀԱՄԿԻ-ի 3-րդ պլենումը նշում է խոշորագույն թերութիւն-
ների առկայութիւնն արհմիութիւնների աշխատանքում՝ աշ-
խատավարձի գծով: Չնայած 9-րդ Համագումարի և Համկոմկուսի
1933թ. փետրվարի 5-ի վորոշումներին՝ արհմիութիւնները դեռ
չեն վերակառուցել իրենց աշխատանքներն աշխատավարձի բնա-
զավառում նոր խնդիրների ու կուսակցութեան վորոշումների կա-
պակցութեամբ և իրենց գծով չեն ձգտել, վորպեսզի աշխա-
տավարձը դառնա աշխատանքի արտադրողականութեան բար-
ձրացման և աշխատանքային կարգապահութեան ամրացման
հիմնական լծակը: Այս բոլորը ցույց են տալիս, վոր մինչև այժմ
արհկազմակերպութիւններում դեռ արմատախիլ չեն արված
ոպորտունիստական տարրերը:

Արհկազմակերպութիւնների մեծ մասի հիմնական բացն է
հանդիպանում աշխատանքի թափթիվածութիւնը՝ ուշադրութեան
ցումը, չափազանց մեծ քանակութեամբ հարցեր լուծելու ցան-
կութիւնը, ուշադրութիւնը գլխավորի ու հիմնականի վրա կենա-
րոնացնելու, յորաքանչյուր սովյալ մոմենտում ամենակարեւոր
ու հանդուցային հարցից կառչելու անկարողութեան մեջ: Իրա
հետեւանքով աշխատավարձի խնդիրները հարկ յեղածին պես չեն
մշակվում և մինչև վերջը չեն կենսագործվում: Միութիւնները
կենտրոնների և մարզային բաժինների պրոֆ. աշխատողների
մեծ մասը հարկ յեղածին պես ջգիտե գործարանի, ցեխի, բրի-
գադի, հանքահորի կյանքը, չ՛գիտե առանձին բանվորների աշ-
խատավարձը, արտադրանքի նորման, աշխատանքի արտադրո-
ղականութիւնը, չգիտե խոտանի և պարապուրդի պատճառները,
այդ խնդիրներն ամենուրեք ուսումնասիրում է զբասնչակալին:
հաշվետվութիւնների գործարտեղկումների տեղեկագրերի և կամ:

տնտմարմինների նյութերի հիման վրա: Նման «աշխատանքը»
անխուսափելիորեն ծնում է թեթեւամտութիւն, ֆրազյորակա-
նութիւն և ամենակոպիտ աչքակապութիւն:

Այս ամենը արդունք է այն բանի, վոր աշխատանքի դրա-
սենյակային-բյուրոկրատական մեթոդների մակերցնային, վոչ
կոնկրետ զեկավարութիւն է ցուցաբերվում և արհմիութիւնների
կենտրոնների, արհմիութիւնների ու մարզկոմների աշխատակից-
ները գաստրոյային ձեւով են այցելում ձեռնարկութիւնները,
դա հանգում է այն բանին, վոր չնայած մեծ քանակութեամբ
ընդհանրացուցիչներն են այցելում ձեռնարկութիւնները, բայց
միութեան անդամները, ինչպես նաև գործարկումները, ցեխկոմ-
ները, հետեւաբար և ձեռնարկութիւնները նրանից իրական
աջակցութիւն չեն ստանում:

Նույնպես շատ քիչ բացառութիւններով անբավարար է
գործարկում տեղկոմների աշխատանքների գրութիւնը: խոսքով
կոչ անելով պայքարելու աշխատանքի արտադրողականութեան
բարձրացման, հավասարեցման վերացման համար, նրանք գործ-
նականում չեն պայքարում աշխատավարձի բնագավառում գոյու-
թիւն ունեցող խեղաթլութիւնների դեմ, չեն կարողանում ձեռք
բերել առաջատար պրոֆիտների բանվորների և արտադրութեան
մեջ աշխատող ճարտարագետ տեխնիկական աշխատավորների
լավագույն վարձատրութիւն: Գործարկում տեղկոմների ու ցեխ-
կոմների նախագահները, վորպես կանոն, վոչ միայն չեն իմա-
նում բրիգադները և առանձին բանվորների աշխատավարձի չափը,
այլ և չգիտեն առանձին աշխատավարձն ու աշխատանքի արտա-
դրողականութիւնն ըստ ցեխերի և ամբողջ գործարանի, չեն
պայքարում վերացնելու խոտանի, պարապուրդի և արտադրանքի
նորմաների թերակատարման պարճառները, չեն ստուգում բան-
վորների աշխատավարձի ու արտադրանքի հաշվարկումների
ճշտութիւնը: Գործարկում-տեխնիկումները դեռ չեն սովորել աշխա-
տավարձից անցնել արտադրանքի նորմաների թերակատարման
յորաքանչյուր առանձին փաստը, ոգտագործել պայքարելու աշ-
խատանքի լավագույն կազմակերպման և արտադրողականութեան
բարձրացման համար: Չեն կարողանում արհմիութիւնների ար-
տադրական-մասսայական աշխատանքը տեղափոխել արտադրան-
քի նորմայի կատարման, տեխնիկայի յորաքան և աշխատան-
քի արտադրողականութեան բարձրացման համար մղվող պայ-
քորի ճակատը:

Այս ամենն այդպես դասավորվել է միայն նրա համար, վոր գործարկումները դեռ չեն հրաժարվել, իսկ շատերն էլ չեն ցանկանում հրաժարվել աշխատանքի բյուրոկրատական ու գրասենյակային մեթոդներից և փոխանակ բանվորական ակտիվին իրենց աշխատանքի մեջ ներգրավելու, ստեղծել են մի ամբողջ շարք բաժիններ ու սեկտորներ՝ աշխատակիցների մեծածավալ հաստիկներով: Այդ տեղի չե ունենում նաև նրա համար, վոր գործարկումների նախադասները, փոխանակ սիստեմատիկ ամենորյա այցելություններ կատարելու դեպի ցեխերը, հանքահորերը, ճաշատանները, հանրակացարաններն ու բնակարանները, գերադասում են ժամանակն անցկացնել անհամար նխատերում ու խորհրդակցություններում:

Պլենումն արձանագրում է, վոր տնտեսարմինների անբավարար զեկավարություն, միութայունների կենտրոնների, նրանց մարզային բաժինների և գործարկումների անուշադիր ու վոչ քննադատական վերաբերմունքի հետևանքով, աշխատանքի չափավորման ու աշխատավարձի խնդիրներում տնտեսական և արհմիութենական կազմակերպությունները թույլ են տվել ամենակոպիտ խեղաթյուրումներ: Այդ խեղաթյուրումներն արտահայտվում են նույնանման աշխատանքների արտադրանքի նորմաների գնահատումների խալտարեղտությունը, վերին աստիճանի բարդ ու մասնատված նորմաներ սահմանելով և չափավորման աշխատանքի տրակտիկայի անկայունությունը, վորն որինականացնում է պարապուրդն ու անկանոնությունները, պրոգրեսիվ վարձատվություն հաշվարկման ծայր աստիճան բարդությունը:

Այս բոլորը հանգում է նորմաների սահմանման խնդրում չափազանց մեծ խճճվածություն և այն բանին, վոր բանվորների խոշոր մեծամասնությունը չգիտե իր համար սահմանված նորմաներն ու գնահատումները, ծանոթ չե աշխատավարձի վրա կատարվող վերադիրների պրոգրեսիվ վարձատրության ու պարզեցվածությունների պայմաններին ու լեղանակների և դրա հետեվանքով էլ հնարավորություն չունի անձամբ հաշվելու և ստուգելու իր աշխատավարձի հաշվարկման ճշտությունը: Նման պայմաններում գործարքը կրում է ձեվակախ բնույթ և աշխատանքի արտադրողականության բարձրացման խթան չի հանդիսանում:

ՆՍՀՄ ԺԿՍ-ն և Համ. Կ. (բ)ԿԿԿ-ի Դոնբասի վերաբերյալ այս կարևոր ցուցմունքներն ամենատեղալ նշանակություն ունեն և զգալի չափով պիտի վերադրել արդյունաբերության բոլոր

ճյուղերին ու արանսպորտին: Ծանր արդժողկոմատի արդյունաբերության մեջ հաշվվում է մոտ 3 միլիոն, իսկ Հաղ. Ճան. Ժողկոմատի արդյունաբերության մեջ մոտ 2 և կես միլիոն արտադրանքի նորմաներ: Բանվորներին արվող նորմաների մանրությունն այնտեղ է հասնում, վոր չափավորման են լինթարկում ամենաչնչին շարժումները հայրուր լերորդական բուպեներով և գնահատումները սահմանում են տասներյորդական կուպեկներով: Նույնը տեղի աւնի նաև գոյություն ունեցող տարիֆային տեղիկագրերում. վորակավորումները մանրացված են մեծ մասամբ շատ քիչ կամ բոլորովին իրարից չտարբերվող հազարավոր պրոֆեսսիաների, վորը ծայր աստիճանի խճճվածություն և բարդություն է առաջանում բանվորների աշխատավարձը սահմանելիս՝ նրանց ըստ տարիֆային ցանցի բաժանելու ժամանակ:

Իրա հետ միասին, ոլլենումը նշում է մի շարք արհմիությունների աշխատանքներում գոյություն ունեցող «ձախ» ուղորտունիստական խեղաթյուրումները, վորոնք հանգում են այն բանին, վոր արհմիությունները փոխարինում են տնտեսարմիններին, վիժեցնում միանձնյա զեկավարությունը և դրազվում վարչարարությունը աշխատավարձի խնդիրներում: Պլենումը սխալ է համարում այն, լերբ մի շարք արհմիական կերպություններ տընտամարմինների փոխարեն իրենց վրա լին վերցնում տարիֆային ցանցի, կվալիֆիկացիոն տեղակագրերի մշակումը և արտադրանքի նորմաների ու գնահատումների սահմանումը (շոֆերների ԿԿ-ը):

Պլենումը նշում է տնտեսական և արհմիութենական կազմակերպությունների չափազանց թույլ աշխատանքն աշխատանքային կարգապահության ամբողջման և բանվորական վայրում աշխատանքի կազմակերպման ասպարիզում, վորը տանում է գեպի բանվորական ժամերի խոշոր կորուստը:

Ուշացումները, ընդմիջումները, բացակայություններն ու աշխատանքը ժամանակից շուտ դադարեցնելը, հաճախ գրավում են բանվորական որվա մեծ մասը: Որինակ՝ քարտաշ Շատրովի ողակը «Երկտրոստալի» շինարարության վրա ապրելի 15-ի առավոտյան և կեսրից հետո աշխատանքից ուշանալու հետեվանքով չի աշխատել 3 ժամ: Փրունդելի անվան գործվածքային գործարանում յենթավարպետների ինքնագլուխ հանգստանալը հերթափոխության ընթացքում տեվում է մինչև 1 և կես ժամ:

Շինանյութերը ժամանակին չհասցնելը, նախագծերի բացա-

կառուցուելը, նարքադները և կարգադրութունները սպասելը, գործիքների հետեւից ման գալը, վարպետներին փնտրելը և այլն յերկարատեւ պարապուրդների պատճառ են հանդիսանում: Որինակ՝ Դնեպրոկոմբինատի օՆլեկտրոստալիս և այլ շինարարութունների վրա նման պարապուրդները հազվագուշա զեպքում ե, վոր կազմում են ամբողջ որվա 30 տոկոսից պակաս, յերբեմն հասնելով 60 տոկոսի և ավելի:

Միաւին վերցրած այդ յերկու պատճառների հետևանքը լինում է այն, վոր որինակ՝ «Մոսխիմկոմբինատում» գործիքների վրա աշխատող բանվորների ոգտակար աշխատանքը բանվորական ամբողջ որվա ընթացքում, ինչպես ցույց են տալիս ստուգումները, մեկ բանվորի մոտ կազմում է միայն 2 ժամ, մյուսի մոտ — 3 ժամ 05 րոպե, և յերրորդի՝ — 2 ժամ 27 րոպե:

Պլենումը նշում է, վոր արհեստրուդները չափազանց թույլ աշխատանք են կատարում վերահսկելու ՀԱՄԿԽ-ի և արձմիութունների IX-րդ համագումարի այն վորոշումների կատարումը, վորոնք վերաբերվում են արձմիութունների վերակառուցմանը՝ աշխատավարձի, աշխատանքի արտադրողականության բարձրացման և աշխատանքային կարգապահության ամբողջման ընդգրկում:

ՀԱՄԿԽ-ի 3-րդ ՊԼԵՆՈՒՄԸ ՎՈՐՈՇՈՒՄ Ե.

1. Պարտավորեցնել բոլոր արձմիութենական կազմակերպութուններին՝ ծավալել բայրիկիկյան լայն ինքնաջնադատութուն արձմիութենական կազմակերպութունների աշխատանքներում՝ թույլ աված վերոհիշյալ թերութունների շուրջը, վճռականորեն խփել աշխատանքի գրասենյակային բյուրոկրատական մեթոդներին, արձմիութունները խճկված դասակարգային խորթ տարրերին, այլատեղի և բանվորական մասսաներից կտրված ուղորտունիստներին, բոլոր այն պրոֆաշխատողներին, վորոնք ընդիմանում են կամ անընդունակ են գործնականում կիրառելու արձմիութունների IX-րդ Համագումարի և ՀԱՄԿԽ-ի 1933թ. փետրվարի 5-ի վորոշումներն՝ աշխատավարձի, աշխատանքի արտադրողականության, աշխդիսցիպլինայի ամբողջման ընակավառում աշխատանքի բովանդակութունն ու մեթոդներն արմատապես վերակառուցելու մասին: Այդպիսի աշխատողներին քչելով պրոֆապարատից և հեռացնելով միութենական անդամները շաքրերից:

2. Ակաթիվ կերպով մասնակցելով աշխատավարձի պլանավոր-

ման ու կարգավորման գործին, արհկազմակերպութուններն իրենց աշխատանքի ընթացքում պետք է հիմնական ուշադրութուն դարձնեն տնտկազմակերպութուններին ոգնել, աշխատավարձն այնպես կազմակերպել, վոր նա գործնականում գառնա ճիմնական լծակ աշխատանքի կազմակերպման ու աշխատանքի բարձր արտադրողականության համար մղվող պայքարում, սպահովի վարձատրության սխտեմների և աշխատանքի չափավորման կարգավորումը, աշխատավարձի ընագավառում գոյութուն ունեցող խեղաթյուրումների ու հավասարեցման վճռական վերացումը, առաջատար պրոֆեսիաների և արտադրության մեկ աշխատող Ճ.Տ. աշխատավորների ավելի լավ վարձատրութունը, աշխատանքի վարձատրման ամենապարզ, յուրաքանչյուր բանվորի համար մատչելի ձևերի սահմանումը: Չխառնվելով այն սպերատիվ ֆունկցիաներին, վոր ունեն տնտմարմիններն աշխատավարձի գծով, արհկազմակերպութունները պետք է սխտեմատիկորեն ուսումնասիրեն գոյութուն ունեցող նորմաները, գնահատումները, չափավորման տեղեկագրերը, հսկողութուն սահմաններն նրանց ճիշտ կիրառման վրա, վճռականորեն պայքարելով ազմինիստրացիայի կողմից աշխատավարձի խնդրում թույլ արվող բյուրոկրատական խեղաթյուրումների դեմ:

3) Նպատակ ունենալով վերացնել գործարկումների աշխատանքի ուղորտունիստական և գրասենյակային բյուրոկրատական մեթոդները՝ պլենումը պարտավորեցնում է գործարկումների ու ցիխոմաների նախագահներին և մյուս ազատված աշխատողներին իրենց բանվորական որվա առաջին կեսն անպայման անցկացնել հանքահորկրում, ցեխերում, պարբերաբար ստուգել հաշվային տեղեկագրերը և առանձին բանվորների աշխատավարձը, պարզել և ստուգել տեղերում բանվորների բողոքներն ու դիմումները, նորմալ աշխատանքի, արտադրանքի նորմաները և բանվորների աշխատավարձի բարձրացմանը խանգարող պատճառները, խոտանի, պարապուրդի, պատահարների պատճառները և անմիջապես ազմինիստրացիայի միջոցով միջոցներ ձեռք առնել անհարթութունները վերացնելու համար:

4) Արձմիութունները չեն կատարի իրենց կարեվորագույն պարտականութուններից մեկը, յեթե նրանք չձգտեն, վորպեսզի յուրաքանչյուր բանվոր և յուրաքանչյուր բրիգադա պարզորոշ իմանա իր արտադրանքի նորման, գնահատումները, տարիֆային դրույքը և իր աշխատանքի վարձատրման սխտեմը, վորպես-

զի գործարքով աշխատող բանվորն ունենա պարզ պատկերացում իր աշխատավարձի մասին, վորը կավելացնի նրա շահագրքագավածութունը աշխատանքի արտադրողականութունը բարձրացնելու ուղղությամբ:

Գործարկում-տեղկումները պետք է ամեն կերպ հեշտացնեն բանվորի համար աշխատավարձը հաշվելու ձեովը, ձգտեն, վորպեսզի ցեխերում կախված լինեն հիմնական նորմաների ու զնահատումների աղյուսակները, ինչպես և նորմաները կատարող և գերակատարող առանձին բանվորների աշխատավարձի որինակելի հաշվարկումները և արտադրանքի աչնպիսի հաշվառում, վոր բանվորը, վորպես կանոն, կարողանա իմանալ հերթավորության ընթացքում իր կատարած աշխատանքի արդուները:

5. Արձմիութունների աշխատանքներում հիմնական խընդիրը պետք է լինի պալքարել նորմայի համար, սոցմրցման ու հարվածաչնության կազմակերպման համար, յուրաքանչյուր բանվորի արտադրանքի նորմայի կատարման և գերակատարման համար, խոտանի լրիվ վերացման և արտադրության վորակի բարձրացման պայմանով: Միաժամանակ արձմիութունները պետք է վճռականորեն ձգտեն, վորպեսզի աղմինիստորացիան ստեղծի սահմանած արտադրանքի նորմաների լրիվ յուրացումն ապահովող անհրաժեշտ կազմակերպչական-և արտադրական տեխնիկական պայմաններ բանվորների համար: Միստեմատիկորեն հետեվել արտադրողականության պլանի կատարումն ապահովող ձեռնարկումների կենսագործմանը:


6. Պալքարելով տեխնիկական չափավորման ամենալայն տարածման ու արմատացման և փորձնական-վիճակագրական նորմաները սխտեմատիկաբար տեխնիկայես հիմնավորված նորմաներով փոխարինելու համար, Պլենումը միաժամանակ վճռականորեն նախադրուչացում է՝ բանվորներին չափազանց մանրացված, խճճված և անհասակնալի արտադրանքի նորմաներ տալու. մենչե-վիկյան-Ֆլասարակական դիրքավորումից, այն չափավորողներից, վորոնք խճճում և խեղաթյուրում են չափավորման գործը չափազանց բարդ ֆորմուլաներով: Անհրաժեշտ է պարզեցնել տեխնիկական չափավորման աշխատանքը և դարձնել այն մատչելի ու հասկանալի վարպետների և բանվորների համար:

Պլենումն առաջարկում է բոլոր միությունների հենակումներին միջոցներ ձեռք առնել, վորպեսզի տնտմարմինները մատակարարեն ընթացքում վերանային աշխատանքի չափավորման

սխտեմները, նրանց մաքսիմալ չափով պարզեցնելու, արտադրանքի գործող նորմաների քանակը կրճատելու, նրանց մանրությունը վերացնելու՝ տիպային ու խոշորացված նորմաներ մտցնելու ուղղությամբ. նորմաներն ու գնացուցակները, վորպես կանոն, պետք է տրվեն վոչ թե ժամերով ու րոպեներով, այլ նատուրալ արտահայտությամբ, (հատով, քաշով, ուղղով և կոպիկով): Պլենումը գտնում է միանգամայն անթույլատրելի ցեխաչին տեխպերսոնալի, մանավանդ վարպետների, կտրվածությունը չափավորման աշխատանքներից և աղաջարկում է չափավորման գործն ամբողջապես լնթարկելու ցեխի պետին, նորմաներ ու զնահատումներ սահմանելու խնդրում չափավորողի աշխատանքին ակտիվ մասնակից դարձնելու վարպետին և ցեխի պետի, թույլտվությամբ՝ նրան իրավունք տալու սահմանված նորմաներից առանձին շեղումներ կատարել: Նորմաներն ու զնահատումները պետք է տրվեն բանվորներին անմինջապես վարպետի կողմից: Արձմիութունները պետք է ամեն կերպ ուղեն տնտմարմիններին չափավորման մարմինների և չափավորող կազմերի ընտրության ու համալրման խնդրում, այդ աշխատանքներին ներգրավելով լավագույն հարվածայիններին:

7. Արձանագրելով նորմաների վերանայմանը լավագույն հարվածայիններին և հին վորակյալ բանվորներին մասնակից անելու դրական արդյունքները, Պլենումն անհրաժեշտ է գտնում ամբացնել ձեռնարկներում կոլլայանագրային կամպանայի ընթացքում ստեղծված տեխնիկական չափավորման աշխատանքներին ոժանդակող բրիգադաներ, վորպես գործարկումներին ու ցեխումներին կից մշտական կամավոր, ակտիվ և կազմակերպել նման բրիգադաներ այն ցեխերում, վորտեղ նրանք գեռ գուլություն չունեն:

8. Աշխատանքի բարձր արտադրողականության համար մղվող պալքարում խոշոր նշանակություն ունի աշխատանքն ըստ վորակի և քանակի վարձատրելու խնդիրները՝ գործարքային, պրոգրեսիվ և պրիմիալ քաջալերող ձևերի կիրառման հիման վրա: Մինչդեռ արձմիութեանական և տնտեսական մարմինները ցուցաբերելու են այդ սխտեմների թերագնահատում, իսկ մի շարք դեպքերում՝ բացահայտ խեղաթյուրում, 1933 թ. սկզբներին վող արտադրության մեջ գործարքի ընդգրկումը կազմում է 66,3 տոկոս, իսկ առանձին ձյուղերում՝ այնլի քիչ: Գործարքի արմատացմանը ցուցաբերվող ձևական մոտեցումը ծնում է կեղծ գործարք. գործարքային նարյաղները լրացվում և զնահատվում են



11-263599



աշխատանքն ավարտելուց հետո (Լյուբերիցկու գործարան, շոգե-
քարշերի ընթացիկ վերանորոգում), կատարած աշխատանքն
բնգումնում և առտնց չափելու, գործադրվում և աշխատանքի
դիտավորչալ վերագրում (Մետրոստրոյ): Գործարքի սխտեմի և
նրանով բանվորների հետ հաշվեհարդար կատարելը հաճախ կա-
ռուցված են լինում այնպես, վոր բանվորները վոչինչ չեն հաս-
կանում նրանից:

Պլինումն արձանագրում և բանվորների և Ճ.Տ. աշխատավոր-
ների գոյությունն ունեցող պրեմիալ սխտեմների մեջ պարզեա-
տրման շկալաների ու կոնֆիցենտների ծալրաստիճան բարդու-
թյունը հաշվարկների ու որնակների խճճվածությունը, վորոնք
զժվար ըմբռնելի յեն մինչև անգամ գրագետ ու հատուկ պա-
տրաստականության տեր աշխատողներին: Պլինումն առաջար-
կում և միությունների կենտկոմներին միջոցներ ձեռք առնել
տնտմարմինների միջոցով այդ թերությունների վերացման և
աշխատանքի վարձատրության գործարքային ձեվի ավելի լայն
կիրառման համար:

9. Աշխատավարձի ու չափավորման ընագավառում գոյու-
թյուն ունեցող վերոհիշյալ թերություններն ավելի մեծ չափով
գոյություն ունեն խորհանտեսությունների, ՄՏԿ-ների և ՄՏ ար-
հեստանոցների բանվորների ընդգրկող արհկազմակերպություն-
ների աշխատանքներում:

Տեխնիքական կուլտուրաներ մշակող (բամբակ, մետաքս և
այլն) խորհանտեսություններում, ՄՏԿ-ներում և ՄՏ արհեստա-
նոցներում տարիֆային ռեֆորմը գործնականում կիրառվում և
անրավարար չափով, վորի հետեվանքով այդ ձեռնարկություն-
ների մեծ մասում գոյություն ունեն հավասարեցում, տարիֆա-
լին ղիսցիպլինայի կոպիտ խախտումներ, վորոնք առաջ են
բերում աշխատավարձի ֆոնդերի գերածախս. գործադրվում են
տարիֆային հին ցանցերը (Սորտսեմտրեստ):

Պլինումն առաջարկում և գյուղատնտեսական աշխատողների
միությունների բոլոր կազմակերպություններին և պրոֆխոր-
հուրդներին, ճիշտ այնպես, ինչպես արդյունաբերության մեջ,
միջոցներ ձեռք առնել տնտմարմինների միջոցով սանմանելու
բանվորներին մատչելի աշխատանքի վարձատրության սխտեմ-
ներ, ավարտելու տարիֆային ռեֆորմը, գրա հիման վրա վերաց-
նելու աշխատավարձի հավասարեցումը, պարզեցնելու չափավոր-
ված աշխատանքը, մորլիզացիայի յենթարկելով բանվորական

մաստաներին, պայքարելու աշխատանքի արտադրողականության
բարձրացման (բարձր բերքատվության), բերքահավաքի կամ-
պանիայի ժամանակին կազմակերպման և արտադրանքի հանգ-
ման խնդրում խորհանտեսությունների և կոլտնտեսությունների
կողմից պրոլետարական պետության առաջ հանձն առած պար-
տավորությունների կատարման համար:

10. Համարելով միանգամայն անրավարար արհկազմակեր-
պությունների աշխատանքն աշխդիսցիպլինայի բնագավառում,
պլինումը պարտավորեցնում և բոլոր արհկազմակերպություննե-
րին, մանավանդ գործարկում-տեղկումներն, հիմնովին փոխել
իրենց վերաբերմունքը դեպի այդ կարեվորագույն հարցը, գործ-
նականում ձեռք բերել չուրաքանչյուր աշխատողի կողմից իր
պարտականությունների բարեխիղճ կատարում, հոգատար վերա-
բերմունքը դեպի հումուլթն ու սարքավորումը, ժամանակին
ներկայանալը աշխատանքի, աշխդիսցիպլինայի ամրացումը աշ-
խատանքի վալրում՝ ինչպես աղմինխտրացիայի միջոցով,
նույնպես և կուլտուրական ու հասարակական ներգործության
ձանագարհով՝ սկումբներ, կարմիր անկուսներ, ԳԿՀ-ներ,
ընկերական դատարաններ: Պլինումն առաջարկում և արհկազ-
մակերպություններին վոչ թե խոսքով, այլ գործով անխնա
պայքարել բանվորական ժամանակի վատնողների, չվոդների,
ժուլլերի, արտադրությունը կազմալուծող լոդերի դեմ, մորլի-
զացիայի յենթարկելով քաղաքական, դադափարական և տնտե-
սական ներգործության բոլոր լծակները (հասարակական բոյկոտ,
հեռացում միությունից և այլն), և պահովելու ԽՍՀՄ-ի ԿԳՀ-ի և
ՖԿԽ-ի 1932 թ. նոյեմբերի 15-ի գործալքման վերաբերյալ դեկ-
րետի հաստատուն կիրառումը:

11 Պլինումը պարտավորեցնում և բոլոր արհկազմակերպու-
թյուններին, հատկապես ՃՏՄ-ներին, ամեն կերպ աշխատել, վոր
ձՏ աշխատողները հիմնարկներից արտադրություն փոխադրվեն,
լայն կերպով պարզաբանելով նրանց այդ գործի քաղաքական և
տնտեսական նշանակությունը, այդ տեղափոխումը շահագործելու
համար արտադրության մեջ աշխատող ձՏ աշխատավորներին, գրա-
սենյակում աշխատողների համեմատությամբ, ապահովելով ավելի
բարձր վարձատրությամբ, գերազանց մատակարարմամբ և բնա-
կարանով:

12. Յուրաքանչյուր բրիգադի, առանձին բանվորի ու ձՏ
աշխատավորի աշխատավարձի կոնկրետ դիֆերենցիալ մատեցում

ունենալու խնդիրները պահանջում են բոլոր արհկազմակերպու-
թյուններից ճշտիվ կերպով գիտենալ և աշխատավարձի խնդիր-
ները, տարիֆային ցանցերն, կվալիֆիկացիոն տեղեկագրերը,
կտրողանալ գլուխ հանել տեխնիքական նորմաներից:

Պլենումն առաջարկում է բոլոր արհկազմակերպություններին
աշխատավարձի և տեխնիկավորման խնդիրներում վերապատ-
րաստվել միությունների կենտկոմների, մարզային արհխորհրդ-
ների, միությունների մարդկոմների, գործարկում-տեղկոմների
աշխատակիցներին և արհակախմբին՝ նրանց գիտելիքները բարձ-
րացնելու նպատակով:

13. Արդյունաբերական աշխատանքի նոր պայմանների
կազմակերպումը, զտնել անհրաժեշտ ԽՍՀՄ ԺԿԽ-ի և Համ. Կ. (բ)
ԿԿԿ-ի արտադրական խորհրդակցությունների գծով գիրեկտորի
ոգնականի պաշտոնը՝ վերացնելու մասին ունեցած վորոշումը
տարածել արդյունաբերության մնացած ճյուղերի վրա, մասսա-
յական — արտադրական աշխատանքների վորջ ղեկավարությունը
կենտրոնացնելով գործարկումներում ու ցեխկոմներում, աշխատա-
վարձի խնդիրներին և մասսայական-արտադրական աշխատանք-
ների անմիջական ղեկավարությունը դնելով գործարտեղկոմների
նախագահների վրա:

Ցեխային, բրիգադային և պրոֆեսիաների արտադրական
խորհրդակցություններում պետք է լավին առանձին բանվորների
զեկուցումները արտադրանքի նորմաների կատարման ու նոր-
սարքավորման տեխնիկան յուրացնելու մասին:

14. Պլենումը պարտավորեցնում է արհխորհրդներին կարգա-
վորել սխտեմատիկ կոնտրոլը, իրական ղեկավարությունն ու
ոգնությունը արտադրական միությունների աշխատանքներն աշ-
խատավարձի բնագավառում վերակառուցելու և աշխատավարձի
արտադրողականության բարձրացման ու աշխույժացիլինայի ամ-
բացման գծով միությունների կատարելիք աշխատանքի մասին
ՀԱՄԿԽ-ի 3-րդ պլենումի վորոշումը կատարելու ապարեզում:
Միությունների կենտկոմները, արհխորհուրդներն ու մարդկոմները
պետք է ամբողջովին լավին գործարկում-տեղկոմների աշխատանք-
ների անմիջական, կոնկրետ ու ոպերատիվ ղեկավարությանը,
հառուկ ուղադրություն դարձնելով գործարանում, ցեխում հան-
քահորում և արհխմբակում՝ գործարկումներին իրական և ամե-
նորյա ոգնություն ցույց տալու խնդիրներին վրա: Միությունների
կենտկոմներն ու մարզային բաժինները պետք է ապահովեն գոր-

ծարկում-տեղկոմների, ցեխային և հանքահորային կոմիտեների
ամբացումը լավագույն աշխատավորներով:

15. Արձանագրելով արհկազմակերպությունների անուշադիր
վերարեմունքի հետեվանքով մի շարք ձեռնարկություններում
առաջացած կեղծ հարվածաչուությունն ու աչքակապությունը,
պլենումը մասնանշում է բոլոր արհկազմակերպություններին,
վոր կարող է հարվածային համարվել միայն այն բանվորը, վորը
կատարում է գերակատարում է իր նորմաները, պայքարում է
տեխնիկայի լրիվ տիրապետման, խուտանի վերացման ու արտադ-
րանքի վորակի բարձրացման համար և իր լավ աշխատանքով
որինակ է ծառայում մնացած բանվորներին: Յուրաքանչյուր
գործարանային, ցեխային և հանքահորային կոմիտե պետք է
ճանաչի իր լավագույն հարվածայիններին, նրանց կոնկրետ
ոժանգակություն ցույց տա տեխնիկայի տիրապետման և արդ-
ֆինպլանների կատարման համար մղվող պայքարում, լավագույն
հարվածայիններին և հարվածային ու անտաճավարկային բրիգադ-
աների վորձը տարածելով ալլ արտադրական բնագավառներին
վրա և ապահովելով հարվածայինների նյութական կենցաղային
և կուլտուրական գերազանց սպասարկումը:

* * *

Հաստատելով, վոր կոլեկտիվ պայմանագիրը հանդիսանում
է արհմիությունների աշխատանքների հիմքը ձեռնարկությունում,
Պլենումն ընդգծում է, վոր կոլպայմանագիրը միայն այն դեպ-
քում կկատարի իր դերը վորպես աշխատանքի արտադրողակա-
նությունը բաժրացնող, ինֆնարեքի իջեցնող և արտադրանքի
վորակը լավացնող, աշխատավարձը ճիշտ կարգավորող և բան-
վորների նյութական ու կուլտուր-կենցաղային սպասարկումը
բարելավող լծակ, չերբ արհմիություններն ապահովեն նրա
սխտեմատիկ ու ամենորյա կենսագործումը:

Պլենումը կոչ է անում բոլոր արհմիություններին՝ բապլելի-
կորեն մոբլիլացիայի լենիֆիկել բանվորական լայն մասսաներին
2-րդ հնգամյակի առաջին տարվա ժողովրդական տնտեսության
պլանը ճաշող կատարելու համար, հիմնվելով ընկ. Ստալինի պատմա-
կան 6 ցուցմունքների և Համ. Կ. (բ) Կ. ԿԿ-ի ու ԿՎՀ-ի հուլիսյան
պլենումի վորոշումներին վրա:



ՀՀ Ազգային գրադարան



NL0936026

1934 p. 137

11

26959